

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

### ԵՊՀ-ի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2023 թվականի դեկտեմբերի 13-ին կայացած Գիտական Խորհրդի N 5 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քեյյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 22-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քեյյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և  
քվեարկության դրեց նիստի օրակարգը:

#### Օրակարգ

1. ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրերի  
ընթացիկ մոնիթորինգի արդյունքների քննարկում  
/զեկ. որակի ապահովման հանձնաժ.նախ. Ս.Ռ.Սուվարյան/  
2. Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի  
մշակում (21T-1E192) թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմայի  
հաշվետվության քննարկում  
/զեկ. թեմայի ղեկավար Թ.Գ.Վարդանյան/  
3. Ընթացիկ հարցեր

Օրակարգը հաստատելուց հետո

**1. ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **որակի ապահովման  
հանձնաժողովի նախագահ դոց.Ս.Ռ.Սուվարյանի** հաղորդումը: Հաղորդման ընթացքում  
դոց.Ս.Սուվարյանը ներկայացրեց «Ֆոկուս» խմբի կողմից իրականացված  
աշխատանքները (զեկույցը կցվում է):

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.** **ղեկան Ս.Ս.Քեյյանը** փորձեց ճշտել գործընթացում կրթական ծրագրերի  
ղեկավարների ներգրավվածության աստիճանը: **դոց.Գ.Փ.Ալեքսանյանը** հարցրեց  
MOODLE համակարգում կրթական ծրագրերի պլանը պատշաճ կերպով չտեղադրելու  
արդյունքում լծակների առկայության մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաշվետվությունը ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ:

**2. ԼՄԵՑԻՆ.** «21T-1E192» ծածկագրով «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» վերնագրով թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմայի ղեկավար Թ.Գ.Վարդանյանի ամփոփիչ հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է):

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ՝** դոց.Ս.Ռ.Սուվարյանն անդրադարձավ թեմայի վերնագրին և փորձեց ճշտել թեմայի իրականացման համար ձևավորված խմբում կա առյժ՛ք կառավարման մասնագետ: Վերնագրում «Կայուն կառավարում» արտահայտությունը դրվել է, սակայն աշխատանքում անդրադարձ չկա, ավելի նպատակահարմար չէր առյժ՛ք «Կայուն կառավարում» արտահայտությունը փոխարինել «Ապահովման կառավարում» արտահայտությամբ: Ս.Ռ.Սուվարյանը հրավիրեց խորհրդի ուշադրությունը «Հիմնախնդրի իրականացման փուլ» արտահայտության սխալ ձևակերպման վրա, ինչպես նաև անդրադարձավ թեմայի իրականացման նպատակների կետին, ինչն, իր դիտարկմամբ, թերի էր ներկայացված՝ բացակայում էր աշխատանքի ծրագիրը, նախագիծը և մոդելը:

**դոց.Ա.Թ.Գրիգորյանը** հակասական որակեց ներկայացված աշխատանքն ասելով՝ չվստահելով «նախկինում իրականացված» աշխատանքների արդյունքներին ինչպե՞ս է հնարավոր առաջարկել «համապարփակ պլան» օգտագործելով նույն «նախկինում իրականացված» աշխատանքի տվյալները:

**դոց.Ռ.Ս.Սովսեայանը** փորձեց ճշտել, թե «համապարփակ պլան»-ի ներկայացման համար առյժ՛ք օգտագործվել են այլ (նախկինում իրականացված) աշխատանքների «պլանները»: Ինչպես նաև ճշտեց կապը լճի ջրի քանակի կորստի ու ժամանակի միջև:

**դոց.Ա.Հ.Աղինյանը** նշեց, որ աշխատանքում անդրադարձ չկա եվրոդիրեկտիվների չափանիշներին, ինչպես նաև ներկայացված չէ օգտագործելի ռեսուրսների քանակը, ասել է թե՛ ջրային ռեսուրսների թույլատրելի օգտագործման քանակը:

**պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը** փորձեց ճշտել աշխատանքում նշված գլոբալ տաքացման և Սևանա լճի մակարդակի բարձրացման կապը:

**Թ.Գ.Վարդանյանն անդրադարձավ հնչեցրած հարցերին՝ տալով իր մեկնաբանությունները:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** **Դոց.Ա.Թ.Գրիգորյանը** մեջբերեց զեկուցող Թ.Գ.Վարդանյանի ելույթից՝ վստահություն չեն ներշնչում հիդրոմետի տվյալները, ստորերկրյա հոսքի ներկայացված քանակի տվյալները, աշխատանքում ներկայացված ջրագոյություն խիստ մոտավոր տվյալները, - ինչպես է հնարավոր առանց վստահելի տվյալների իրականացնել համապարփակ պլանի առաջարկ իրականացնել: Աշխատանքում չկա մոդելի առաջարկ և որոշ տեղեկատվություն ներկայացված է առանց փաստացի հիմնավորող տվյալների: **Դոց.Ս.Ռ.Սուվարյանը** նշեց որ ներկայացված հաշվետվությունը հիմնովին տարբերվում է նախորդ քննարկմանը ներկայացված հաշվետվությունից ինչը ողջունելի է և նշեց, որ կողմ է քվեարկելու հաշվետվության ընդունմանը: **Դոց.Գ.Փ.Ալեքսանյանն** իր ելույթում նշեց աշխատանքում առկա թերությունները՝ հստակ չեն դրվել ջրային ռեսուրսների կառավարման կառուցվածքի մեթոդաբանական բաղադրիչները, ինչպես նաև աշխատանքում չեն համապատասխանում հետևյալ բաղադրիչները՝ 1.աշխատանքի վերնագիրը, 2.դրված նպատակը, 3.կատարված հետազոտության և 4.վերջնական ամփոփումը: Այստեղ առկա է մեթոդաբանական և աշխատանքի բովանդակության փոխկապակցվածության անհամապատասխանություն, -նշեց **դոց.Գ.Փ.Ալեքսանյանը:** **Դոց.Ա.Հ.Աղինյանն** իր ելույթում համեմատականներ անցկացրեց նախորդ և ներկայիս քննարկմանը ներկայացրած հաշվետվությունների միջև և նշեց, որ իրականացվել է բավականին մեծ աշխատանք: **Դոց.Ա.Հ.Պոտոսյանն** իր ելույթում նշեց, որ նախկինում արված բոլոր աշխատանքներից մեկ քայլ առաջ է: **Պրոֆ.Վ.Ռ.Բոյնագրյանը** խորհրդի ուշադրությունը հրավիրեց դրված պահանջների և իրականացված աշխատանքի

վրա: Նշեց, որ աշխատանքում ներկայացված գրաֆիկներն ու սխեմաները վերցված են նախկինում այլ հեղինակների կողմից իրականացված աշխատանքներից: Հաշվետվության մեջ բացակայում են դաշտային աշխատանքների տվյալներ և արդյունքները, արդյո՞ք դրանք իրականացվել են թե ոչ: Հստակ չի երևում, թե նախատեսված երկու տարիների ընթացքում ի՞նչ նորույթ և արդյունք են ստացել: Վ.Ռ.Բոյնագրյանը նշեց նաև, որ հաշվետվությունը կրում է մենագրության բնույթ և բավարարված չէ ներկայացված աշխատանքից:

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** *Ընդունել «21T-1E192» ծածկագրով «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմայի ղեկավար Թ.Գ.Վարդանյանի ամփոփիչ հաշվետվությունը:*

**Թ.Գ.Վարդանյանն** *անդրադարձավ ելույթներում հնչեցրած կետերին և տվեց իր պարզաբանումները:*

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՍ՝ 19, ԴԵՍ՝ 2, ՁԵՌՆՊԱՀ՝ 1, *Ընդունել «21T-1E192» ծածկագրով «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմայի ղեկավար Թ.Գ.Վարդանյանի ամփոփիչ հաշվետվությունը:*

### **3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ**

**3.1 ԼՍԵՑԻՆ.** Ֆիզ. աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ Արսեն Գրիգորյանի հաղորդումը Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Եվա Անդրանիկի Դանիելյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Եվա Անդրանիկի Դանիելյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**3.2 ԼՄԵՑԻՆ.** Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Վահագն Գրիգորյանի հաղորդումը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտներ **Արթուր Գրիշայի Արբահամյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արթուր Գրիշայի Արբահամյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**3.3 ԼՄԵՑԻՆ.** Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Վահագն Գրիգորյանի հաղորդումը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Անուշ Գագիկի Համբարձումյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Անուշ Գագիկի Համբարձումյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

*Գիտական խորհրդի նախագահ՝*

*Մ.Ս.Քեյյան*

*Գիտական խորհրդի քարտուղար՝*

*Ե.Ս.Մանուկյան*